## ԲՐԲԱՆԿԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
## ԳԱՆԳԱՏ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՍԽԱԼ ՎԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս ձևը պետք է օգտագործվի միայն աշխատակցի սխալ վարքի մասին հայտնելու համար։ Բրբանկի Ոստիկանական Վարչության քաղաքականության, գործելակերպի կամ ոստիկանության դեպքի վայր հասնելու ժամանակամիջոցի վերաբերյալ գանգատները պետք է քննարկվեն հերթափոխի հրամանատարի հետ։ Այս ձևը լրացնելուց հետո Դուք կարող եք այն անձամբ վերադարձնել կամ սպիտակ և դեղին պատճենները կարող եք նամակով ուղղարկել **Burbank Police Department, Professional Standards Bureau, P.O. Box 6459, Burbank, California 91510-6459,** իսկ վարդագույն պատճեն պահեք Ձեր համար։

Անուն____________________ Ծննդյան Ամսաթիվը____________________

Տան Հեռախոսը ____________________ Բջջային____________________

Հասցեն______________ Քաղաքը__________ Նահանգը________ Փոստային Կոդը__________

Էլեկտրոնային Փոստ____________________ Խոսկցական Լեզուն____________________

Դեպքի Ամսաթիվը____________________ Դեպքի Ժամը____________________

Դեպքի Վայրը________________________________________

Մասնակից աշխատակիցների անունը, կրծքանշանի համարը կամ սերիական համարը (եթե հայտնի են) ։

______________________________
______________________________
______________________________

Դեպքին ներկա եղող վկաների անունները, հասցեները և հեռախոսների համարները (եթե հայտնի են)։

______________________________
______________________________
______________________________

Խնդրում ենք շարադրեք Ձեր գանգատը, մեջը նշեք անունները, ժամերը, վայրերը, վկաները և այլ տեղեկություններ, որոնք կարող են օգտակար լինել Ձեր գանգատի հետաքննության ժամանակ ։ Եթե աշխատակիցների անունները հայտնի չեն, ապա նկարագրեք նրանցից յուրաքանչյուրին

________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________

Ամսաթիվը____________________ Ստորագրությունը____________________

### ՄԻԱՅՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Պետք է լրացվի սույնը ստացող ավագի կողմից

Ավագի Անունը____________________

Ստանալու ամսաթիվը և ժամը____________________

**C320-174 (Rev. 9/10)**

## ԲՐԲԱՆԿԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳԱՆԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Այս գործելակերպի նպատակն է ժողովրդի գանգատներին տրամադրել արդար, բացահայտ և արագ հետաքննություն, կապված այս Վարչության աշխատակիցների վարքի հետ։ Մեր կողմից քաղաքացիներին քաջալերում ենք, որ նրանք գանգատներ ներկայացնելու միջոցով Բրբանկի Ոստիկանական Վարչության ուշադրությանը հրավիրեն Վարչության գործունեության և նրա աշխատակիցների վարքի վրա, եթե քաղաքացին հավատացած է, որ տվյալ վարքը անպատշաճ է եղել։

Հավատը և վստահությունը Ոստիկանական Վարչության անդամների և Համայնքի հարաբերություններում շատ կարևոր է օրենքի արդյունավետ գործադրման համար։ Ոստիկանության աշխատակիցները հատուկ պատասխանատվություն ունեն պրոֆեսիոնալ և հարգալից ձևով վերաբերվելու բոլոր անձանց իրավունքներին ում հետ կառնչվեն ։ Օրենքը գործադրող սպաները և աշխատակիցները պետք է ազատ զգան, որ իրենց լավագույն դատողությունը գործածեն, խոհեմ ու անաչառ ոստիկանական ծառայություններ մատուցեն առանց ռեպրեսիաներից վախենալու։

Բրբանկի Ոստիկանական Վարչությունը պատասխանատվություն է ստանձնում գանգատի և կարգապահական գործելակերպի արդար համակարգ հիմնելու, որը աշխատակիցներին կարող է ենթարկել ուղղիչ միջոցների, եթե աշխատակիցները իրենց անպատշաճ են պահել և միաժամանակ օգնեն նրանց, եթե նրանք պատշաճորեն են կատարել իրենց պարտականությունները։

Եթե, Դուք հարցեր ունեք կապված այս գործելակերպիի հետ, ապա խնդրում ենք կապնվել Ոստիկանության Պետի Գրասենյակի հետ. երկուշաբթիից մինչև ուրբաթ, սովորական աշխատանքային ժամերի ընթացքում։

Վարչության գործելակերպի դիրեկտիվները կապված քաղաքացիների գանգատների հետ, առկա են զննության համար, պահանջի դեպքում։

Հարգանքներով.
Ոստիկանության Պետ

| | |
|---|---|
| Ոստիկանության Պետի Գրասենյակ | **(818) 238-3200** |
| Սովորական Ծառայությունների Համար | **(818) 238-3000** |
| Պրոֆեսիոնալ Ստանդարտներ | **(818) 238-3238** |
| Տեղեկություններ | **(818) 238-3333** |
| Հերթափոխի Հրամանատար | **(818) 238-3130** |

Բրբանկի Ոստիկանական Վարչությունը ողջունում է Ձեր գանգատները և տեղին քննադատությունները օրենքի լավագույն ձևով գործադրման համար ։

Վարչության գործելակերպը նախատեսում է մինչև 60 օր քաղաքացու գանգատի հետաքննության համար ։ Գանգատները սովորաբար լուծվում են այդ ժամանակամիջոցում ։ Հապաղումներ կարող են արտոնվել Պետի կողմից, եթե լրացուցիչ ժամանակի անհրաժեշտություն լինի։ Հապաղումների և նրա պատճառների մասին Վարչությունը Ձեզ տեղյակ կպահի։

## ԳԱՆԳԱՏԻ ՊՐՈՑԵՍԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք գերադասում ենք, որ Դուք գանգատը անձամբ ներկայացնեք Ոստիկանական Վարչություն, համենայնդեպս, գանգատները կարող են ներկայացվել հեռախոսով կամ նամակով **(Burbank Police Department, P.O. Box 6459, Burbank, CA, 91510)** և կարող են լինել անստորագիր։ Ստացված այս բոլոր տեղեկությունները գաղտնի կպահվեն Բրբանկի Ոստիկանական Վարչության կողմից ։

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը պարտադիր է, եթե գանգատ ներկայացնողը 18 տարեկանից փոքր է ։ Գանգատ ներկայացնելու ժամանակ ձեզանից կպահանջվի ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

1. Ձեր անունը, հասցեն, հեռախոսի համարը(ները) ։
2. Տուժածի անունը, հասցեն, հեռախոսի համարը(ները) և տարիքը, եթե տուժածը Դուք չեք։
3. Դեպքի օրը, ամսաթիվը և վայրը, որի մասին Դուք գանգատ եք ներկայացնում։
4. Վկաների անունները, նրանց հասցեները և հեռախոսի համարը(ները), եթե հայտնի են։
5. Առկայության դեպքում, մասնակից ոստիկանության աշխատակիցների անունները, կրծքանշանի համարը կամ անձի նկարագրությունը։
6. Այս գործի կապակցությամբ Ձեզ կամ տուժածին ներկայացնող դատապաշտպանի կամ այլ անձի անունը, հասցեն և հեռախոսի համարը(ները) ։
7. Գանգատի հիմք ծառայող դեպքի նկարագրությունը։

Պետի կամ Բաժնի Հրամանատարի կողմից հատուկ քննիչ կնշանակվի, որը կկապնվի բոլոր վկաների հետ, կքննի գործին վերաբերող փաստերը և կհավաքի բոլոր տեղեկությունները կապված Ձեր գանգատի յուրաքանչյուր վկայակոչության հետ ։ Հետաքննության ավարտից հետո որոշում կկայացվի վկայակոչված յուրաքանչյուր սխալ վարքի վերաբերյալ, ըստ Բրբանկի Ոստիկանական Վարչության քաղաքականության ։

Գանգատի վերաբերյալ վերջնական վճիռ կկայացվի Պետի կամ Բաժնի Հրամանատարի կողմից ։ Եթե գանգատը հաստատվի, ապա Պետը իրավունք ունի համապատասխան ուղղիչ և/կամ կարգապահական միջոցներ կիրառելու ։